ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՌԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ՍՊԻՏԱԿ
ԲՆԱԿԱՎԱՅՐԸ	ԿԱԹՆԱՋՈՒՐ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Կաթնաջուր բնակավայրն ընկած է Բազումի լեռնաշղթայի արևմտյան մասի սարահարթի հարավում, գտնվում է ծովի մակերևույթից 1715մ բարձրության վրա: Բնակավայրի բնակիչները հին գյուղի ավերակների վրա բնակություն են հաստատել 1826 թվականին: Բնակավայրում բնակություն հաստատած առաջին ընտանիքների մեծ մասը գաղթել էր Իրանի հայաշատ գավառներից, ինչպես նաև Մուշից, իսկ մի քանի ընտանիքներ էլ փոխադրվել էին Աշտարակից:

Բնակավայրի առաջին վարժուհին եղել է օրիորդ Մանյան, որը եկել է Թիֆլիսից, ավարտել էր Գայանյան դպրոցը: Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին գյուղացիները մտել են կամավորական ջոկատներ՝ արևմտահայության ազատագրման գործին օգնելու համար: Արցախյան հերոսամարտին Կաթնաջուրից մասնակցել և Լաչինի շրջանում 1992թ-ին զոհվել է ազատամարտիկ Սողոմոն Բաբկենի Սեյրանյանը /ծնվ.21.11.1957թ./: Այսօր Կաթնաջրի միջնակարգ դպրոցը կոչվում է Սողոմոն Բաբկենի Սեյրանյանի անունով:

Բնակավայրում հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, կարտոֆիլի բազմամյա խոտաբույսերի արտադրությամբ, մշակում են նաև բանջարա-բոստանային կուլտուրաներ: Գյուղատնտեսության բնագավառում համայնքը աչքի չի ընկնում բարվոք ոռոգման ներքին ցանցով: Անասնապահության բնագավառում հիմնականում զբաղվում են խոշոր եղջերավոր անասնապահությամբ:

Բնակավայրն ունի միջնակարգ դպրոց, որը կառուցվել է 2001 թ.-ին: Դպրոցում սովորում են 162 աշակերտ: Բնակավայրն ունի բուժկետ, որը գործում է համայնքային կենտրոնի շենքում:

Բնակավայրի բնակչությունը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 1794 մարդ՝ 470 տնտեսությամբ: Գյուղում մեծ է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը: Բնակավայրն ունի համայնքային կենտրոն՝ կառուցված 2009թ-ին:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՀՀ Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջանի Կաթնաջուր գյուղն ընկած է Բազումի լեռնաշղթայի արևմտյան մասի սարահարթի հարավում, գտնվում է ծովի մակերևույթից 1715մ բարձրության վրա: Սպիտակ քաղաքից գտնվում է 15 կմ, Վանաձորից 35կմ, Երևանից 100կմ հեռավորության վրա: Ունի լեռնային ռելիեֆ և չոր կլիմա՝ ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով:

3.ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ) -455

Օդի միջին ջերմաստիճանը հունվարին(^{0}C) - -4,4

Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (^{0}C) - 17,6

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Սպիտակ
2. Բնակավայրի հեռավորությունը՝	
2.1) համայնքի կենտրոնից (կմ)	15
2.2) մայրաքաղաքից (կմ)	100
2.3) մարզկենտրոնից (կմ)	35
2.4) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	50
2.5) նախկին շրջկենտրոնից (կմ)	15
2.6) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	3
2.6) մոտակա երկաթուղային կայարանից (կմ)	3
4. Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1715
5. Բնակավայրի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	20,78/2078
6. Սահմանակից համայնքների և/կամ բնակավայրերի անվանումները	Սպիտակ, Ջրաշեն, Լեռնավան, Ծաղկաբեր, Մեծ Պարնի, Շիրակամուտ, Գեղասար
7. Բնակավայրի վարչական ղեկավարի հեռախոսահամարը	+37499-00-03-02
8. Բնակավայրում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ), քանակը	այո-1
9.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	ոչ
10. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	ոչ

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2025թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	1794
2. Գրանցված ծնունդների քանակը	5
2.Մահացության դեպքերի քանակը	4
3.Ամուսնությունների քանակը	3
4. Ամուսնալուծությունների քանակը	0
5. Տնային տնտեսությունների թիվը	470
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	78
7. Կենսաթոշակառուների քանակը	228
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	82

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Գրադարանների քանակը	0
2. Արվեստի դպրոցների քանակը	0
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	1
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	0

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2025թ.
1. Բնակավայրի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	42000
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	-
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	315

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2025թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	1744,15
2. Բնակավայրերի հողեր (հա)	117,84
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	5,38
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտներ	7,01
5. Հատուկ նշանակության	-
6. Հատուկ պահպանվող տարածքների	3,42
7. Անտառային	189,44
8. Ջրային	11,72
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	615
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	78
11. Խոզերի գլուխաքանակը	104

12. Գյուղատնտեսական տեխնիկա	0
12.1 տրակտորներ (քանակը)	8
12.2 կոմբայններ (քանակը)	4
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	415

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	5
2. Բնակավայրի գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	Այո
3. Բնակավայրի աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	Ոչ
4. Բնակավայրում գերեզմանատան առկայությունը (այո, ոչ)	Այո
5. Ներբնակավայրային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	16
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	15
6.2 Էքսկավատորների քանակը	1
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	3
6.4 Գրեյդերների քանակը	0
6.5 Աղբատար մեքենաների քանակը	0
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	0
7. Բնակավայրի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	0
8. Բնակավայրի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	ոչ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ
10. Ներբնակավայրային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Բնակավայրում համայնքապետարանի աշխատողների թվաքանակը,	4
որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	1
2. Բնակավայրի բնակիչ ավագանու անդամների թվաքանակը	2

11. ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	Ակնկալվող լուծումը և լուծման ժամկետները
Դպրոցի մարզադահլիճի կառուցում	2025-2026թթ.
Երկրաշարժի հետևանքով վթարային դարձած տների ամրացում	2025-2030թթ.
Փողոցների ասֆալտապատում	2025-2030թթ.